ՄԻՋԻՆ ԴԱՐԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ

Պատմության ինստիտուտի կառուցվածքում 1944 թ. ստեղծվել է Հին ու միջին դարերի պատմության բաժին, որի առաջին վարիչը Սուրեն Երեմյանն էր (1944–1966): Բաժինն ակտիվ գործունեություն է ծավալել միջնադարյան Հայաստանի պատմության կարևորագույն խնդիրներից մեկի՝ գյուղացիության պատմության հարցերի ուսումնասիրության ասպարեզում, որի արգասիքն է բաժնի գիտաշխատող Ս. Հակոբյանի հեղինակած «Հայ գյուղացիության պատմություն» երկհատորյակը (հ. Ա, Ե., 1957, հ. Բ, Ե., 1964):

Բաժնում լայն թափով առաջ է մղվել պատմագիտության օժանդակ բնագավառներից մեկը՝ աղբյուրագիտությունը, որը բացառիկ նշանակություն է ունեցել հայ և հարևան երկրների ու ժողովուրդների անցյալի ուսումնասիրության գործում: Բաժնի գիտաշխատող Վազգեն Հակոբյանն այդ տարիներին ձեռնամուխ է եղել Երևանի Մատենադարանի գրչագրերում պահպանված սկզբնաղբյուրների ուրույն բնագավառի՝ XIII–XVIII դդ. հայերեն մանր ժամանակագրությունների համեմատական տեքստեր կազմելու աշխատանքին: Այդ ուղղությամբ նրա աշխատանքի արդյունքներն ամփոփվել են «Մանր ժամանակագրություններ. XIII–XVIII դդ.» երկհատորյակում (հ. I, Ե., 1951, հ. II, Ե., 1956), որով էապես ընդլայնվել ու հարստացել է գիտական շրջանառության մեջ եղած սկզբնաղբյուրների շրջանակը:

Բաժնի գիտաշխատող Լևոն Խաչիկյանը Մատենադարանի գրչագրերի հետազոտության հիման վրա ձեռնամուխ է եղել տևական ժամանակ պահանջող մի աշխատանքի՝ 14-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների ժողովածու կազմելուն: Աշխատանքի շնորհիվ էապես հարստացել է տվյալ ժամանակաշրջանին վերաբերող հետազոտությունների աղբյուրագիտական հենքը: 845 հիշատակարան ընդգրկող ժողովածուն հրատարակվել է 1950 թ.: Դրանից հետո Լ. Խաչիկյանը ձեռնամուխ է եղել 15-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների երկհատորյակը կազմելուն: Նա 1955 թ. լույս է ընծայել 15-րդ դարի հիշատակարանների առաջին հատորը, որտեղ ներառված է 744 հիշատակարան, իսկ 1958 թ.՝ երկրորդ հատորը, որն ընդգրկում է 814 հիշատակարան: Հատորի ընդարձակ առաջաբան-ուսումնասիրությունը նվիրված է Հայաստանի 15-րդ դարի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմությանը, որով էապես լրացվեց հայոց պատմության տվյալ ժամանակաշրջանի ուսումնասիրության լուրջ բացը: Հետագայում՝ 1984 թ., Մատենադարանի մի խումբ աշխատակիցների հետ նա հրատարակել է արժեքավոր ժողովածուի երրորդ հատորը:

Աղբյուրագիտության ու բնագրագիտության բնագավառներում բեղուն աշխատանք է ծավալել բաժնի գիտաշխատող Հակոբ Անասյանը: Նա հաջողությամբ սկզբնավորել է 5–18-րդ դդ. հայ ինքնուրույն և թարգմանական, տպագիր ու անտիպ գրականության գիտական մշակումը՝ երևան հանելով բնագրային յուրաքանչյուր միավորի աղբյուրագիտական ու բնագրագիտական առանձնահատկությունները: Հ. Անասյանի «Հայկական մատենագիտություն» (հ. Ա, Ե.,

1959, հ. Բ, Ե., 1976) կոթողային ուսումնասիրությունը հայագիտության մեծագույն ձեռքբերումներից է: Այս աշխատության Գ հատորը 2004 թ. հրատարակել է Երևանի պետական համալսարանը: Հ. Անասյանը քննության նյութ դարձրեց նաև թուրքերի կողմից 1453 թ. Կ.Պոլսի գրավմանը նվիրված ժամանակակից երկու հայ հեղինակների՝ Աբրահամ Անկյուրացու և Առաքել Բաղիշեցու չափածո գործերը, ինչպես նաև 17-րդ դարի հեղինակ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի ստեղծագործությունից մի հատված, որը նվիրված է այդ իրադարձությանը: Հետազոտության արգասիքը «Հայկական աղբյուրները Բյուզանդիայի անկման մասին» խորագրով լույս է տեսել 1957 թ.: Հ. Անասյանի ուշադրության կենտրոնում են նաև արևմտահայ ազատագրական շարժման հարցերը: Դրա վկայությունն է նրա «XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում» (Ե., 1961) մենագրությունը:

Բաժնի գիտաշխատակիցները հայկական սկզբնաղբյուրների ուսումնասիրությանը և հրատարակությանը զուգահեռ, զբաղվել են նաև նյութը ռուսերեն թարգմանելու գործով: 1952 թ. լույս է տեսել Մխիթար Գոշի «Դատաստանագրքի» (թարգմանիչ Գ. Պապովյան) ռուսերեն թարգմանությունը:

Հայոց միջնադարագիտության կարևորագույն խնդիրներից մեկի՝ Կիլիկիայի հայկական պետության քաղաքական պատմությունն է ուսումնասիրել Գ. Միքայելյանը: Նա հանգամանորեն անդրադարձել է դեպի Կիլիկիա հայերի կատարած արտագաղթին, այդ երկրամասում հայկական իշխանությունների և պետության երևան գալու ու նրա անկման սոցիալ-քաղաքական ու տնտեսական պատճառներին: Նրա աշխատությունը՝ «История Киликийского армянского государства» լույս է տեսել 1952 թ.: Այն այսօր էլ չի կորցրել իր գիտական արժեքը, ուստի 2007 թ. լույս է տեսել նաև հայերեն: Հետագայում Կիլիկիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությանն անդրադարձ են ունեցել նաև բաժնի գիտաշխատակիցներ Ա. Գալստյանը՝ «Սմբատ սպարապետ» (Ե., 1961) և Ս. Բոռնազյանը՝ «Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կիլիկյան հայկական պետությունում XII–XIV դարերում» (Ե., 1973):

1966 թ. Հին և միջին դարերի պատմության բաժնի տրոհումից հետո Միջին դարերի պատմության բաժնի վարիչը 1966–1971 թթ. ԳԱ ակադեմիկոս Ս. Երեմյանն էր, 1971–1980 թթ.՝ պատմական գիտությունների դոկտոր Վ. Հակոբյանը, որին հաջորդել է ակադեմիկոս Հ. Բարթիկյանը: Բնագրագիտության բնագավառում ունեցած ակնառու վաստակի համար նա 1981 թ. արժանացել է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի:

1950-ական թթ. սկզբից գիտական ասպարեզ մտած երիտասարդները ոչ միայն նոր թափ են հաղորդել բաժնի աշխատանքներին, այլև նպաստել են ինստիտուտի գիտահետազոտական թեմատիկայի ընդլայնմանը: Նրանցից ոմանք իրենց ասպիրանտուրական ուսումնառությունը ստացել էին ԽՍՀՄ գիտական առաջատար կենտրոններում՝ աշակերտելով հին և միջնադարյան պատմության ականավոր մասնագետների: Զարգացած միջնադարի ագրարային հարցերով զբաղվեց Վ. Բարխուդարյանը, պավլիկյան շարժման սկզբնաղբյուրներն ուսումնասիրել և դրա արդյունքները հրատարակել է Հրաչ Բարթիկյանը՝ «Պավլիկյան շարժման պատմության ուսումնասիրության սկզբնաղբյուրները» (Ե., 1961), Հայաստանում հաստատված արաբական

ամիրայությունների պատմությունը շարադրել է Արամ Տեր-Ղևոնդյանը՝ «Արաբական ամիրայությունները Բագրատունյաց Հայաստանում» (Ե., 1965)։ Նա հետագայում հրատարակել է «Армения и Арабский халифат» (Ե., 1977) արժեքավոր աշխատությունը, քննության է առել նաև Ագաթանգեղոսի երկի արաբերեն բնագիրը։

Լ. Բաբայանը հրատարակել է «Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII–XIV դարերում» (Ե., 1964) աշխատությունը, որի համառոտ տարբերակը լույս է տեսել նաև ռուսերեն (Ե., 1969)։ Դրանում իրենց լուծումը գտան քննվող ժամանակաշրջանի Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական կյանքին վերաբերող մի շարք հարցեր։ Հայասորական առնչությունների հարցերին անդրադարձավ Հ. Մելքոնյանը՝ «Ասորական աղբյուրներ» (հ. Ա, Ե., 1976) աշխատությամբ։ Դրանում հայերեն թարգմանությամբ ներկայացված են VI դարի չորս նշանավոր ասորի պատմիչների՝ Հայաստանին և հայերին վերաբերող հատվածներ, իսկ կից տրվել են համապատասխան ուսումնասիրություններ։

Սելջուկների՝ Հայաստան կատարած արշավանքների և Հայաստանում ստեղծված սելջուկյան ամիրայությունների պատմության հիմնահարցերը հանգամանալից ներկայացրել է Ս. Բոռնազյանը։ Նրա հետմահու լույս տեսած մենագրությունը՝ «Հայաստանը և սելջուկները XI–XII-դդ.» (Ե., 1980), խարսխված է հայկական ու թուրքական սկզբնաղբյուրների, ինչպես նաև թուրքագետ հեղինակների աշխատությունների հիման վրա։

Բաժնի գիտաշխատողները «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» աղբյուրագիտական մատենաշարը հարստացրել են առանձին՝ բյուզանդական, հունական, ասորական, արաբական և թուրքական աղբյուրների նոր շարքերով։ Առանձնապես բեղմնավոր էր Հ. Բարթիկյանի գործունեությունը։ Նա ուսումնասիրել և հայերեն է հրատարակել հինգ հեղինակների աշխատությունները՝ «Կոստանդին Ծիրանածին» (Ե., 1970), «Հովհաննես Սկիլիցես» (Ե., 1979), «Թեոփանես Խոստովանող» (Ե., 1983), «Պրոկոպիոս Կեսարացի» (Ե., 1987), «Թեոփանեսի Շարունակող» (Ե., 1990)։ Այս աշխատությունները լոկ թարգմանություններ չեն, այլ ընդարձակ առաջաբաններով և ծանոթագրություններով ու մատենագիտական ցանկով օժտված աշխատություններ են։ Հ. Բարթիկյանը չափածո հայերեն է թարգմանել ու ուսումնասիրել նաև բյուզանդական «Դիգենիս Ակրիտաս» էպոսը։ Նա հրատարակության է պատրաստել նաև բյուզանդական մեկ այլ կարևոր սկզբնաղբյուր՝ Միքայել Ատտալիատեսի «Պատմություն»-ը։

Ա. Տեր-Ղևոնդյանը հրատարակել է արաբական պատմագրության նշանավոր ներկայացուցիչ Իբն ալ-Ասիրի բազմահատոր ժամանակագրության Հայաստանին և հայերին վերաբերող հատվածները «Իբն ալ-Ասիր» (Ե., 1982)։ Վ. Հակոբյանն իրականացրել է միջնադարյան Հայաստանի եկեղեցական իրավունքի ժողովածուի՝ «Կանոնագիրք Հայոց»-ի՝ ավելի քան 50 գրչագրերի հիման վրա կազմված գիտաքննական բնագրի հրատարակությունը (հ. Ա, Ե., 1964, հ. Բ, Ե., 1971)։ Այս կարևոր սկզբնաղբյուրի հրատարակման համար Վ. Հակոբյանը 1974 թ. արժանացել է Մեսրոպ Մաշտոցի անվան մրցանակի։ Նա Ա.Գ. Հովհաննիսյանի հետ կազմել և հրատարակել է նաև 17-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների առաջին (1601–1620) և երկրորդ (1621–1640) հատորները (Ե., 1974, 1978)։

Բաժնի գիտաշխատող Բագրատ Ուլուբաբյանը 1970–1980-ական թթ. հրատարակել է Խաչենի իշխանության, Հայոց Արևելից կողմանց և Գանձասարի վանքի պատմությանը նվիրված կարևոր ուսումնասիրություններ: Դրանցից հատկապես աչքի է ընկնում «Խաչենի իշխանությունը X–XVI դարերում» (Ե., 1975) աշխատությունը: Իր աշխատություններում հեղինակն անդրադարձել է խորհրդահայ պատմագիտության մեջ չարծարծված հարցերի, ինչպես նաև հանդես եկել հայոց պատմության ադրբեջանական կեղծարարների մերկացմամբ:

Մանվել Զուլալյանի գիտական հետաքրքրությունների կիզակետում եղել է Արևմտյան Հայաստանի XVI–XVIII դարերի սոցիալ-տնտեսական ու քաղաքական պատմության հետազոտումը: Նրա «Ջալալիների շարժումը և հայ ժողովրդի վիճակն Օսմանյան կայսրության մեջ» (Ե., 1966) և «Արևմտյան Հայաստանը XVI– XVIII դդ.» (Ե., 1980) աշխատությունները կարևոր ներդրում են հայոց պատմության այդ բնագավառի ուսումնասիրման գործում: Մ. Զուլալյանը կատարել է հայ ժողովրդի XIII–XVIII դդ. քաղաքական պատմության հարցերն ըստ եվրոպացի հեղինակների տվյալների հետազոտելու առաջին փորձը: Ցավոք, նա հասցրեց հրատարակել «Հայ ժողովրդի XIII–XVIII դարերի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների» երկհատորյակի միայն Ա (քաղաքական պատմություն) հատորը (Ե., 1990): Հեղինակն իր ուսումնասիրության մեջ զետեղել է աղբյուրագիտական ընդարձակ ակնարկ, որում քննության է առել XVI–XVIII դդ. Հայաստանի սոցիալ-տնտեսական ու քաղաքական վիճակն արտացոլող հարցերը:

Բաժնի գիտաշխատողներն առանձին ուսումնասիրության նյութ են դարձրել նաև Հայկական իշխանական տների ու երկրամասերի պատմությունը, ինչը նպաստում է միջնադարյան Հայաստանի պատմության ավելի ամբողջական քննությանը (Վ. Վարդանյան, «Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը» (Ե., 1969), Ռ. Մաթևոսյան, «Տաշիր-Զորագետ (X դ.–XII դ. սկիզբ)» (Ե., 1982), Հ. Մկրտումյան, «Грузинское феодальное княжество Кахети в VIII-XI вв. и его взаимоотношения с Арменией» (Ե., 1983), Գ. Գրիգորյան, «Տարոնի Բագրատունիների իշխանության պատմությունը IX–X դդ.» (Ե., 1983), Ա. Շահնազարյան, «Վահրամյանների իշխանությունը» (Ե., 1990)):

Միջին դարերի պատմության բաժնի գիտաշխատողների ուսումնասիրությունների ոլորտում է եղել նաև Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի պատմությունը: Լույս է տեսել Վ. Փափազյանի՝ «Հայաստանի առևտրական ուղիները միջազգային առևտրի ոլորտում XVI–XVII դդ.» (Ե., 1990), Հ. Թորոսյանի «Արևելահայ գյուղացիության սոցիալ-տնտեսական դրությունը XVI–XVIII դդ.» (Ե., 1991) և այլոց հետազոտությունները: Բաժնի գիտաշխատակից Հ. Ստեփանյանն անդրադարձ ունեցավ մոնղոլական տիրապետության դեմ հայ ժողովրդի մղած պայքարին՝ «Հայ ժողովրդի պայքարը թաթար-մոնղոլական լծի դեմ» (Ե., 1990), Վ. Տեր-Ղևոնդյանը՝ Կիլիկիայի Հայոց պետության և արաբական իշխանությունների փոխհարաբերություններին:

Հայաստանի անկախության հռչակումից հետո բաժինը մինչև 2010 թ. շարունակեց ղեկավարել ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հ. Բարթիկյանը: 2002 թ. Երևանի պետական համալսարանի

հրատարակչության «Աճեմյան մատենաշարը» երկու գրքերով գիտական հանրությանն է ներկայացնում Հ. Բարթիկյանի «Հայ բյուզանդական հետազոտություններ»-ը: Աշխատությունում ամփոփվել էին ականավոր գիտնականի կեսդարյա աշխատանքների զգալի մասը, Հայաստանի և արտասահմանի մի շարք գիտական ժողովածուներում ու պարբերականներում հրատարակված 131 տարաբնույթ հոդվածներ, հրապարակումներ, գրախոսություններ՝ տպագրված հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն և հունարեն: Երկհատորը 2004 թ. արժանացել է ՀՀ նախագահի մրցանակի: Նույն աշխատության երրորդ հատորը լույս տեսավ 2006 թ:

Բաժնի աշխատակից Ա. Շահնազարյանը բազմաթիվ հոդվածներ հրատարակեց Զաքարյանների իշխանական տան և Տաշիր-Զորագետի Կյուրիկյան թագավորության մասին: Վ. Տեր-Ղևոնդյանը 1994 թ. հրատարակել է «Կիլիկյան Հայաստանը և Մերձավոր Արևելքի արաբական երկրները (1145–1226 թթ.)» աշխատությունը: 2002 և 2008 թթ. լույս տեսան Վ. Վարդանյանի «Արծրունիները հայոց պատմության մեջ» և «Պահլավունիները Հայոց պետականության և հոգևոր անաղարտության պահապաններ» աշխատությունները: Հ. Սվազյանը 2006 թ. հրատարակեց «Աղվանից աշխարհի պատմություն» աշխատությունը, որի ռուսերեն թարգմանությունը լույս տեսավ 2009 թ.: 2002 թ. հրատարակվեց Գ. Գրիգորյանի «Նվիրատվություններ Անիի եկեղեցիներին և վանքերին», իսկ 2007 թ.՝ Հ. Թորոսյանի «Էջմիածնի վանական տնտեսությունը XV–XVIII դդ.» արժեքավոր աշխատությունները: Ա. Ութուջյանի բազմաթիվ հոդվածները նվիրված են հայ պատմագիտական մտքի առանձին պատմաշրջանների պատմահայեցողության վերլուծությանը և հայ նոր պատմագրության հիմնադիր Միքայել Չամչյանի կյանքին և գործունեությանը:

Վերջին տասնամյակին բաժինը համալրած երիտասարդ կադրերը նույնպես կարևոր ներդրում ունեն հայ միջնադարագիտության զարգացման ասպարեզում: Բաժնի գիտաշխատող Կ. Մելիքյանը հրատարակել է «“Narratio de rebus Armeniae” հայ-քաղկեդոնական երկը վաղ միջնադարյան Հայոց եկեղեցու պատմության կարևոր սկզբնաղբյուր» մենագրությունը (Ե., 2007), Ա. Մաղալյանը լույս ընծայեց «Արցախի մելիքությունները և մելիքական տները XVII–XIX դդ.» (Ե., 2007) հետազոտությունը, որի ռուսերեն թարգմանությունը լույս տեսավ 2013 թ.: Դ. Թինոյանը հրատարակեց «Կիլիկիո հայոց թագավորությունը և ինքնիշխան կազմավորումները 1320–1424 թթ.» (Ե., 2011) աշխատությունը: Զ. Գևորգյանը զբաղվեց Կիլիկիայի հայկական պատմության հարցերով, Վ. Թորոսյանը՝ հայ հոգևոր և աշխարհիկ իշխանությունների փոխհարաբերությունների պատմության հիմնահարցերի քննությամբ: Մ. Գրիգորյանն ուսումնասիրեց Բագրատունիների կողմից Հայոց պետականության վերականգնման հիմնահարցը, Լ. Նազարյանը՝ Տայքի կուրապաղատության պատմության խնդիրները, Ա. Վիրաբյանը զբաղվեց Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրության» գիտաքննական բնագրի կազմամբ, իսկ Ա. Վարդանյանը՝ Աղվանքի պատմության հիմնահարցերի ուսումնասիրությամբ, 2013 թ. լույս տեսավ նրա «Աղվանքի պատմաաշխարհագրական քննություն» աշխատությունը:

Միջին դարերի պատմության բաժինը, որի վարիչը 2010 թ. պ.գ.թ. Արտաշես Շահնազարյանն է, ակտիվորեն ներգրավված է նաև ՀՀ համար ռազմավարական կարևորություն ունեցող՝ թուրք-ադրբեջանական պատմաշինարարության դեմ իրականացվող քարոզչական պայքարում: Ա. Շահնազարյանը, Հ. Սվազյանը և Ա. Մաղալյանը շարունակաբար հրապարակումներով հանդես են գալիս ադրբեջանական պատմագիտության կողմից հայոց միջնադարյան պատմության հիմնահարցերի խեղաթյուրման դեմ:

Բաժինը խորհրդային տարիներին ակտիվորեն մասնակցել է «Հայ ժողովրդի պատմության» բազմահատորյակի՝ միջնադարն ընդգրկող հատորների (II, III, IV) ստեղծմանը: Այդ ուղղությամբ կուտակված հարուստ փորձը բաժինն օգտագործեց «Հայոց պատմության» նոր բազմահատորյակի II հատորի առաջին (2018) և երկրորդ (2014) գրքերի հրատարական ընթացքում:

Վերջին տարիներին հրատարակվել են Զ. Գևորգյանի՝ «Կիլիկիայի հայկական պետությունը միջերկրածովյան առևտրի համակարգում XIII–XIV դդ.» (Ե., 2015), Գ. Երանյանի՝ «Հայ ընտանիքի անդամների միջին թվաքանակն ըստ XV դարի ձեռագրերի հիշատակարանների (-Վասպուրականի օրինակով)» (Ե., 2015), Կ. Մելիքյանի՝ «Հայոց եկեղեցու դիրքն ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV–VI դարի I կեսին» (Ե., 2016), Ա. Ութուջյանի՝ «Հայ պատմագիտական միտքը XIV–XVIII դարերում» (Ե., 2016), Ա. Մաղալյանի՝ «Միրզա Ադիգյոզալ-բեկի Ղարաբաղ նամե» (Ե., 2016), Վ. Տեր-Ղևոնդյանի՝ «Կիլիկյան Հայաստանը և Այյուբյան պետությունները (1171-1260)» (Ե., 2017), Հ. Սվազյանի՝ «Աղվանից աշխարհի պատմության ուսումնասիրության հիմունքները», (Ե., 2017), Վ. Վարդանյանի՝ «Աղթամարի կաթողիկոսության պատմություն» (Էջմիածին, 2017) մենագրությունները: Ա. Վիրաբյանը հրատարակել է Զաքարիա Քանաքեռցու «Պատմութիւն, Կոնդակ սուրբ ուխտին Յոհաննու վանից» (Ե., 2015) աշխատության գիտաքննական բնագիրը, Վ. Թորոսյանը՝ «Հայոց կաթողիկոսական իշխանությունը (ԺԱ դարի կեսեր – ԺԲ դարի սկիզբ)» (Ե., 2018) աշխատությունը:

Միջին դարերի պատմության բաժնի գիտահետազոտական աշխատանքների հիմնական ուղղություններն են՝ միջնադարում աշխարհիկ և հոգևոր իշխանությունների փոխհարաբերությունների հետազոտությունը, զարգացած ավատատիրական շրջանի Հայաստանի քաղաքական կազմավորումների պատմության ուսումնասիրությունը, հայ-վրացական և հայ-աղվանական կրոնական ու քաղաքական հարաբերությունների վերհանումը, միջնադարում՝ անկախ պետականության բացակայության պայմաններում Հայաստանի իրավական կարգավիճակի քննությունը, Հայոց միջնադարյան պատմության կեղծարարության բացահայտումը, Հայաստանի նահանգների միջնադարի շրջանի վարչատարածքային և ժողովրդագրական գործընթացների լուսաբանումը, միջնադարյան սկզբնաղբյուրների գիտաքննական բնագրերի կազմումը: Հատուկ ուշադրություն է դարձվում նաև կիլիկիահայության և արցախահայության միջնադարի պատմության ուսումնասիրությանը:

Բաժնի գիտական աշխատանքներն իրականացնում են. բաժնի վարիչ, առաջատար գիտաշխատող՝ պ.գ.թ., դոցենտ Ա. Շահնազարյան, գլխավոր գիտաշխատող՝ պ.գ.դ. Վ. Վարդանյան, ա-

ռաջատար գիտաշխատողներ՝ պ.գ.դ. Հ. Սվազյան, պ.գ.դ. Վ. Տեր-Ղևոնդյան, ավագ գիտաշխատողներ՝ պ.գ.թ. Վ. Թորոսյան, պ.գ.թ. Ա. Մաղալյան, պ.գ.թ. Զ. Գևորգյան, պ.գ.թ. Ա. Վարդանյան, գիտաշխատողներ՝ Ա. Ութուջյան, պ.գ.թ. Դ. Թինոյան, պ.գ.թ. Մ. Գրիգորյան, պ.գ.թ. Գ. Երանյան, կրտսեր գիտաշխատողներ ՝ Լ. Նազարյան, Հ. Խաչատրյան, ավագ լաբորանտ՝ Ա. Ազիզբեկյան, ասպիրանտներ՝ Շ. Ազատյան և Ա. Եսայան: